

## Մրցույթի հայտարարություն

### «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում

#### **սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար**

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) մրցույթի մասնակցության հայտ (Ձև 2),
- 2) սննդի ոլորտում համապատասխան գործունեության կազմակերպման իրավունքի փաստաթղթի պատճենը,
- 3) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

«Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորողների սննդի կազմակերպման համար վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի շուկայական գնահատված արժեքը՝ ըստ գնահատման մասին հաշվետվության կազմում է.

1 ժամվա վարձակալության շուկայական արժեքը՝ 274 (երկու հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են մարզպետարանում 2022 թվականի մարտի 15-ից մինչև մարտի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 14:00 -ից մինչև ժամը 17:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մարտի 22-ին՝ ժամը 11:00-ին Սյունիքի մարզպետարանում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնին (հասցե՝ ք.Կապան, Նժդեհի 1). հեռախոսահամար՝ (0285) 44282, էլ.փոստի հասցե՝ [syunik.krtutyun@mta.gov.am](mailto:syunik.krtutyun@mta.gov.am) :

**Հ Ա Յ Տ**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ**

\_\_\_\_\_ (հայտը ներկայացնող անձի անվանումը, անունը, ազգանունը,)

1. Ծանոթանալով «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 202\_\_թ. կայանալիք

\_\_\_\_\_ (հաստատության  
անվանումը)

ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման մրցույթի վերաբերյալ հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել մրցույթին:

2. Վավերապայմաններ՝

\_\_\_\_\_ (իրավաբանական անձի գտնվելու վայրը (ֆիզիկական անձի բնակության վայրը), հեռախոսահամարը)

3. Կից ներկայացնում եմ.

- 1) սննդի ոլորտում համապատասխան գործունեության կազմակերպման իրավունքի փաստաթղթի պատճենը,
- 2) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական կամ նույնականացման քարտի պատճենը,

Հայտատու

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 202\_\_թ.

